

բութեան եւ պատմութեան վստահելիութեան եւ լրջութեան:

Օրիի համաձայն Յակոբ Զուղայեցի ժողով կազմեց էջմիածնայ մէջ, 1678ին, մինչ իրականութիւնը այն է որ Յակոբ Զուղայեցի պարտքերու պատճառաւ էջմիածնէն փախած էր 1677 տարւոյ Յունիս 1ին: Արդէն խօսած ըլլալով Իսթաշէլ Օրիի պատմաբանական գործի մէջ (Վենետիկ, 1960) հոս աւելորդ է կրկնել այդ ամէնը: 1677 Յունիսէն վերջ Յակոբ Կաթողիկոս երբեք չվերադարձաւ էջմիածին:

Յակոբ Զուղայեցի էջմիածնէն Յունիս 1ին, 1677, փախչելէ յետոյ անցաւ Թիֆլիս: Դժբախտաբար մանրամասնութիւններ չունինք որքան ժամանակ հոն մնալուն եւ ինչ ընելուն մասին: Մեզի հասած է իր մէկ նամակը Եղիազար Այնթապցիի ուղղեալ Կ. Պոլիս հասնելէն վերջը, ուր քիչ ինչ մանրամասնութիւններու կը հանդիպինք. ահա նամակը.—

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Յակոբ կաթողիկոս եկեղեցւոյ ամենայն հայոց, եւ պատրիարք սրբոյ Աթոռոյն էջմիածնի, յորմէ ժամանեցի օրհնութիւն հանգերձ ողջունական սիրով ի վերայ իսկապէս սիրեցեալ եղորդ Եղիազար Հոգեւոր տիրիդ, հանդերձ առ քեզ եղևոց միաբանութեամբ ի Քրիստոս խնդալ յարազուարձ բերկրանօք, ամէն: Յոր չընորհք եւ խաղաղութիւն անսկզբնական էին, զթութիւն եւ ողորմութիւն նորին համազոյական բանին, սէր եւ առատ բարերարութիւն նոյնափառ Հոգւոյն ճշմարտի գետօրէն ծաւալեսցի, անճառ զեղամբ պարգեւեսցի, ընդ քեզ եղիցի եւ առ քեզ լիցի:»

«Եւ ընդ ողջունական օրհնութեան թղթոյս ծանիր, սիրելի, զի քեզ եւս է յայտ մեր վիշտ եւ նեղութիւն՝ թէ ո՞րքան կրեմք այսքան ժամանակ յաղազս պարտուց: Վասն այսորիկ ելեալ մեր չըջաղայութեամբ ի քաղաքս եւ ի գետօրայս օգնութիւն խնդրել ի ք(րիստո)սասէր ժողովրդոց, եկեալ յԱրզրում՝ թէ ո՞րքան դառնութիւն մեզ հասոյց փաշայն, զիտեմ լուեալ իսկ ես: Եւ անտի Երզնկանաւ կամկար զնացիւք ի վերայ քաղաքաց հասաք ի Տիգրանակերտ, եւ անտի՝ ի Սեփաստիայ եւ ի Թոխաթ, որ-

պէս եւ Տէր առաջնորդէր մեզ: Բայց մինչ ի Համիթ էաք՝ Ա(ստուծո)յ տալի խոսրովն թիւր մտօք զղացուցեալ էր Հիւսէն աղային՝ թէ Համթայ ի Հալապ զնալոց է եւ անտի այլուր փախչել կամի, ապա զմեր պարտսն ո՞վ վճարէ, եւ այսքան ժամանակն զոր Վէզիրն զՀիւսէն աղայն Իզմիր կամէր յղել սակա խանին շինութեան: Աղան կասէ՝ թէ քաղաքներն չըրջելով կու դայ, մեզ եւս չա՛հ կու լինինա հակառակօրէն կասէ՝ նա դալոց չէ, մէկ իգար էմր պիտիւր, որ բերեն ի տեղս: Վասն որոյ հարկիւ մեզ վերայ իգար էմրով մուպաշիր ուղարկեցին եւ բերին աստ, յորում եւ խափանումն եղեւ օգնութեանն, որ լինելոց էր ի քաղաքացն: Իսկ աստ յորքան ժամանակս եկեալ եմք, մէկ որ հիւանդութիւնք ազդի աղդի պատեաց զմեզ, երկրորդ՝ որ քաղաքի էիվալմ դու քաջ գիտես, ոչինչ արդիւնք առ մեզ արարին: Բայց սակա խոսրովին հիսապիմ՝ այս երեք անգամ եղեւ որ սիւնհոդոս արարաք, չկարացաք զմեր հիսապմ տեսնել առ նա, վասն որոյ յայսմ հետէ հարկ եղեւ մեզ, որ շէրիաք եւ գիւան մտանեմք՝ թէ զի՞նչ առաջնորդէ Ա(ստուծո)յ: Բայց մինչ ի դաշն մեր ի քաղաքս Թօփալն իւր բանն շիներ էր, եւ թէ ժամաներ էաք նախքան զհոգալն նորա, պէլքի թէ խափանել կարէաք Աստուծով եւ չլինէր այսպէս խռովութիւն, որպէս եւ տեսանեմք: Իսկ այժմս յաղազս Մարտիրոս վարդապետին, զոր հոգալ կամեմք, այնպէս է մեր կամքն, թէ խաքի շէրիֆով լինի, որ հաստատ յաւիտեան, իսկ եթէ խաքի շէրիֆ չլինի, ոչ թողումք ձեռնամուխ լինել, եւ այս Ա(ստուծո)յ է դորձ, որ յաջողէ զկամելն եւ զառնելն, եւ քոյդ օգնականութիւն, որ ամենայն ջանիւ հոգաս: Սիրելի եղբայր, այս ժողովուրդ որպէս անբան անասունք նմանին, եւ եթէ ոչ խթանաւ մղել կամիցի ոք, ոչ առնեն դորձ ինչ, վասն որոյ յօժարեսցիս գալ առանց դանդաղանաց, զոր յոյժ բարւոք առնես, զի ամենայն ինչ հաստատութեամբ առնու զկայութիւն, որպէս եւ մեր ջանքն է: Ըստ այսմ դու եւս պարտիս ջանալ ամենայն յօժարութեամբ, զի Տէրն ամենայնի պահեսցէ զքեզ անխորձ յամենայն չարէ, ամէն:»